ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՂԱՄՅԱՆ ԷԼԻՆԱ ԿԱՐԵՆԻ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГЕГАМЯН ЭЛИНА КАРЕНОВНА

ИНСТИТУТ ОСПАРИВАНИЯ В АДМИНИСТРАТИВНОМ ПРОЦЕССЕ И АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02. - «Публичное право - конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление»

ЕРЕВАН - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Բ. Դանիելյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Ռ. Հարությունյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ **Կ. Վ. Հակոբյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ պետական կառավարման ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հուլիսի 7-ին, ժամը 14:30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲԿԳԿ-ի 001 իրավաբանական մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան, 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2026 թվականի հունիսի 1-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Г. Б. Даниелян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **А. Р. Арутюнян**

кандидат юридических наук, ассистент **К. В. Акобян**

Ведущая организация: **Академия государственного управления РА**

Защита состоится 7 июля 2026 года в 14:30 на заседании специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, Алека Манукяна, 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 1 июня 2026 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Վարչարարության բողոքարկման ինստիտուտը ժամանակակից վարչական իրավունքում և ժողովրդավարական հասարակությունում հիմնարար նշանակություն ունի: Նպատակ հետապնդելով, մի կողմից, ապահովել ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, մյուս կողմից՝ ապահովել վարչական մարմինների գործունեության օրինականությունը, արհեստավարժությունը, հաշվետվողականությունը և թափանցիկությունը՝ վարչարարության բողոքարկման ինստիտուտը ժողովրդավարական հասարակության անկյունաքարերից է: Վարչարարության բողոքարկման ինստիտուտը նաև օրինականության ամրապնդման և կառավարման արդյունավետության բարձրացման կարևորագույն գործիքակազմ է, որի անհրաժեշտությունը հիմնավորվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքով:

Չնայած նրան, որ վարչարարության բողոքարկման ինստիտուտն իր զարգացման ներկա փուլում ունի նախորդող ժամանակաշրջանների համեմատ կայուն իրավական հիմքեր՝ սահմանադրական իրավունքի ու սկզբունքի մակարդակում՝ դիտարկվելով որպես ժողովրդավարական հասարակության և իրավական պետության անբաժանելի բաղադրատարր, այս իրավունքի գործնականում իրացումը և այդ իրացումն ապահովող երաշխիքների ապահովումը, այդ թվում՝ բողոքարկման իրավունքի հասանելիությունը, բողոքարկման սուբյեկտներին առաջադրվող պահանջները, բողոքարկման արդյունքում կայացվող որոշումների կատարելիությունը և խախտված իրավունքների գործնականում արդյունավետ վերականգնումը, դեռևս ձևավորման ու զարգացման ճանապարհին են:

Վարչարարության բողոքարկման ինստիտուտի զարգացման ներկայիս փուլին բնութագրական են վարչարարության բողոքարկման ինստիտուտի նոր մարտահրավերներ՝ բողոքարկման մատչելիության ու հասանելիության ապահովման անհրաժեշտությունը, վարչարարության բողոքարկման համակարգում մասնավոր սուբյեկտների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունից զատ նաև հանրային շահի պաշտպանության երաշխավորումը, վարչարարության բողոքարկման համակարգի վերափոխումը՝ սոցիալապես խոցելի խմբերի իրավունքների ու օրինական շահերի իրական պաշտպանության ապահովման նպատակով, գլոբալ, վերազգային վարչական իրավունքից բխող մարտահրավերների հաղթահարումը, արհեստական բանականության, տեղեկատվական տեխնոլոգիաների արդի զարգացման պայմաններում ժամանակի մարտահրավերներին համահունչ կարգավորումների մշակումն ու ինստիտուտների ներդրումը:

Այսպիսով, թեմայի արդիականությունը պայմանավորված է վարչարարության բողոքարկման ինստիտուտի էության, զարգացման էվոլյուցիայի, դրա առնչությամբ առկա մարտահրավերների, դրանց հաղթահարման ուղիների ուսումնասիրության, վարչարարության բողոքարկման իրավունքի՝ իրավական կարգավորման մակարդակում և գործնականում արդյունավետ իրացման համար անհրաժեշտ գործիքակազմի բացահայտման, վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային ու մասնավոր շահերի իրական ու ողջամիտ հավասարակշռության ապահովման, այս ինստիտուտի ներկայիս մարտահրավերներին համահունչ արձագանքելու և վարչարարության բողոքարկման՝ գործնականում արդյունավետ իրացումը երաշխավորելու անհրաժեշտությամբ:

Հայաստանի Հանրապետությունն իր անկախացումից ի վեր անցել է վարչարարության բողոքարկման ինստիտուտի ամրագրման ու զարգացման մի քանի փուլերով, և չնայած այն հանգամանքին, որ այն ներկայումս սահմանադրորեն ամրագրված հիմնարար իրավունքների վրա ուղղակիորեն խարսխված ինստիտուտ է, այն հայրենական գիտական աղբյուրներում մինչ օրս համապարփակ իրավական հետազոտության չի ենթարկվել: Մինչդեռ վարչարարության բողոքարկման իրավունքի օբյեկտների, սուբյեկտների, բողոքարկման սահմանների հստակեցումը, վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահի պաշտպանության և բողոքարկման արդյունավետության ապահովման գործիքակազմերի խորը գիտական հետազոտությունը Հայաստանի Հանրապետությունում վարչարարության բողոքարկման ինստիտուտի իրավական համապարփակ կարգավորման և գործնականում արդյունավետ իրացման չափանիշների առաջադրման տեսանկյունից ունի կարևորագույն նշանակություն:

Վարչարարության բողոքարկման ինստիտուտը դատական պաշտպանության, իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց ունենալու և պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքների վրա խարսխված, հանրային իշխանություն – քաղաքացի հարաբերություններում խախտված իրավունքների պաշտպանությանն ու վերականգնմանն առաջնահերթ միտված ինստիտուտ է, ինչպիսի պայմաններում ինչպես օրենսդրական մակարդակում այս իրավունքի ոչ համարժեք սահմանափակումները, այնպես էլ դրա գործնականում արդյունավետ իրացման խոչընդոտներն անհամատեղելի կլինեն վերոնշյալ հիմնարար իրավունքների պաշտպանության և, ընդհանուր առմամբ, ժամանակակից ժողովրդավարական հասարակությունում բողոքարկման ինստիտուտի էության և նպատակների հետ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը, այսպիսով, պայմանավորված է վարչական իրավունքի համակարգում հիմնարար նշանակություն ունեցող վարչարարության բողոքարկման ինստիտուտի համապարփակ իրավական հետազոտության, գիտագործնական մակարդակում այս ինստիտուտի առանձին բաղադրատարրերի,

վարչարարության բողոքարկման իրավունքի օբյեկտների, սուբյեկտների, վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահերի պաշտպանությանն ուղղված գործիքակազմերի արդյունավետ իրացման չափանիշների վերհանման անհրաժեշտությամբ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է գիտագործնական չափանիշների հիման վրա համակողմանի ուսումնասիրել վարչարարության բողոքարկման ինստիտուտը և առաջադրել հիմնավորված եզրահանգումներ, որոնք կարող են պիտանի լինել վարչական իրավունքի տեսական հիմքերն առավել համալիր դարձնելու, գիտական աղբյուրներում, իրավաստեղծ գործունեությունում և իրավակիրառ պրակտիկայում վարչարարության բողոքարկման ինստիտուտին առնչվող հարցադրումների վերաբերյալ հնարավորինս միասնական դիրքորոշումներ ձևավորելու միջոցով վարչարարության բողոքարկման ինստիտուտի՝ գործնականում արդյունավետ, խախտված իրավունքների վերականգնումը գործնականում իրապես երաշխավորող կիրառությունն ապահովելու տեսանկյունից:

Ատենախոսության նպատակներին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ հիմնական խնդիրները.

- բացահայտել վարչարարության բողոքարկման ինստիտուտի էությունը, զարգացման էվոլյուցիան և ժամանակակից ժողովրդավարական հասարակությունում դրա ունեցած բովանդակությունը՝ վեր հանելով վարչարարության բողոքարկման ինստիտուտի իրացման երաշխիքները.
- հետազոտել վարչարարության բողոքարկման իրավունքի՝ որպես պատշաճ վարչարարության և դատական պաշտպանության հիմնարար իրավունքների բաղադրատարրի էությունը և իրացման շրջանակները՝ այդ համատեքստում քննարկման առարկա դարձնելով բողոքարկման օբյեկտները, վարչարարության բողոքարկման և վերանայման սահմանները.
- բացահայտել վարչարարության բողոքարկման սուբյեկտների դասակարգման չափանիշները՝ ելնելով վարչարարության բողոքարկմամբ պաշտպանություն հայցվող շահի մասնավոր կամ հանրային բնույթից, մշակել վարչարարությունը մասնավոր և հանրային շահերի պաշտպանության նպատակով բողոքարկվող սուբյեկտների իրավական շահագրգռվածության ստուգման չափանիշները.
- բացահայտել վարչարարության բողոքարկման համատեքստում «հանրային շահ» հասկացությունը, հանրային շահի իրավաբանորեն արժևորման համար անհրաժեշտ նախապայմանները և հանրային շահի պաշտպանությունն ապահովող գործիքակազմերը.
- համալիր ներկայացնել խմբային հայցի, հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման, «դատարանի ընկերոջ» և մասնավոր որոշման ինստիտուտները՝ մշակելով վարչական դատավարությունում դրանց կիրառման թույլատրելիության և

անհրաժեշտության սահմանները և գիտագործնական մակարդակում բացահայտելով դրանց հետապնդած նպատակները, խնդիրները.

- բացահայտել վարչարարության բողոքարկման արդյունավետության էությունը՝ վարչարարության վարչական կարգով բողոքարկումն ուսումնասիրության առարկա դարձնելով իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց ունենալու իրավունքի տեսանկյունից, վեր հանելով բողոքարկման արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ չափանիշները և առանձնացնելով վարչարարության բողոքարկման ընդհանուր համակարգի՝ գործնականում արդյունավետությունը պայմանավորող բնութագրիչները, ինչպես նաև վարչարարության վարչական կարգով բողոքարկման պարտադիրությունը թույլատրելի ու իրավաչափ դարձնող պայմանները.
- վարչարարության բողոքարկման արդյունավետության ապահովման համատեքստում համալիր ներկայացնել վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտը՝ բացահայտելով դրա իրավական բնույթը, առանձնահատկությունները, վարչական ակտի կատարման կասեցման առնչությամբ շահագրգիռ անձանց իրավունքների համապարփակ պաշտպանության համար անհրաժեշտ գործիքակազմերը՝ վարչարարության բողոքարկման արդյունավետության ապահովման համատեքստում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը վարչարարության բողոքարկման ինստիտուտն է՝ որպես վարչարարության արդյունքում խախտված իրավունքների վերականգնման, ինչպես նաև հանրային իշխանության հաշվետվողականության ապահովման և հանրային ու մասնավոր շահերի հավասարակշռության ապահովման գործիքակազմ ու երաշխիք:

Հետազոտության առարկան են վարչարարության բողոքարկման ինստիտուտի էությունը, զարգացման էվոլյուցիան, իրացման երաշխիքները, բողոքարկման օբյեկտները, սուբյեկտները, վարչարարության բողոքարկման և իրավաչափության ստուգման սահմանները, վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահի պաշտպանության և վարչարարության բողոքարկման ինստիտուտի արդյունավետության ապահովման, բողոքարկման ինստիտուտի արդյունավետության համատեքստում վարչական ակտի կատարման կասեցման հարաբերությունները: Հաշվի առնելով վարչարարության բողոքարկման ինստիտուտի համընդգրկուն բնույթը և դրանում ներառվող բազմաթիվ ենթահարցերը՝ սույն ատենախոսության շրջանակում հետազոտության առարկա են դարձվել գիտագործնական առավել կարևոր նշանակություն ունեցող և առավել արդիական հիմնահարցերը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը:

Հայրենական իրավաբանական գրականությունում վարչարարության բողոքարկման ինստիտուտին առնչվող առանձին հիմնահարցերի

անդրադարձել են Գ. Դանիելյանը, Ա. Իսկոյանը, Կ. Հակոբյանը, Ք. Ալեքսանյանը:

Արտասահմանյան գրականությունում վարչարարության բողոքարկման ինստիտուտը խորությամբ ուսումնասիրվել է թե՛ անգլոսաքսոնական և թե՛ մայրցամաքային իրավական համակարգերն ուսումնասիրող գիտական աղբյուրներում, որոնցից հատկապես արժեքավոր են Պ. Քրեյգի, Հ. Վ. Ռ. Վեյդի, Ք. Հարլոուի և Ռ. Ռոլինգսի, Ք. Ռ. Սասթեյնի, Փ. Լ. Շտրաուսի, Մ. Էլլիոթի աշխատությունները՝ անգլոսաքսոնական իրավական համակարգում վարչարարության բողոքարկման ինստիտուտի առանձնահատկությունների առնչությամբ: Եվրոպական իրավական համակարգում վարչարարության բողոքարկման ինստիտուտի վերաբերյալ արժեքավոր աշխատություններ են հեղինակել Օտ. Մայերը, Մ. Սթոլլեիսը, Ռ. Չապուսը, Ժ. Ռիվերոն, Ս. Կասսեսեն, Էբ. Շմիդտ-Աբմանը, Ու. Սթելքենսը, Ժ. Մ. Ուերլինգը: Վարչարարության բողոքարկման ինստիտուտի առանձին հիմնահարցեր ուսումնասիրվել են նաև ռուսական իրավագիտական մտքի կողմից. հատկապես արժեքավոր են Յու. Ն. Ստարիլովի, Գ. Ի. Տիշչենկոյի, Ա. Ռ. Սուլթանովի, Վ. Ս. Չետվերնինի, Գ. Լ. Տիշչենկոյի, Ա. Վ. Մարտինովի և այլոց աշխատությունները:

Չնայած վարչարարության բողոքարկման ինստիտուտի առանձին հիմնահարցերի՝ միջազգային մակարդակով լայն ուսումնասիրվածությանը, քննարկվող ինստիտուտի հիմնարար այլ հարցեր մինչ օրս համապարփակ ուսումնասիրության ենթարկված չեն, և դրանց էությունն ամբողջությամբ բացահայտված չէ նաև գիտական մակարդակում, ինչպիսի պայմաններում առկա է քննարկվող ինստիտուտի համապարփակ իրավական ուսումնասիրման անհրաժեշտություն, որը կապահովի նաև հայրենական իրավական համակարգի առանձնահատկությունների հաշվառումը և առկա խնդիրների հաղթահարման գիտահեն լուծումների առաջադրումը:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության նորմատիվ-իրավական հիմքն են կազմում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, միջազգային պայմանագրերը, Սահմանադրական դատարանի որոշումները, օրենքները և այլ իրավական ակտերը:

- վարչարարության բողոքարկման ինստիտուտին, ինչպես նաև վարչական իրավունքին և ընդհանրապես իրավագիտության խնդիրներին նվիրված աշխատությունները.

- «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով), Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի, Եվրոպական հանձնաժողովի և այլ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների և դրանց խորհրդատվական մարմինների՝ հետազոտության առարկային առնչվող վերլուծությունները.

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հարուստ նախադեպային պրակտիկան, Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի և վարչական դատարանի, Եվրոպական միության

արդարադատության դատարանի, արտասահմանյան երկրների բարձրագույն դատական ատյանների ակտերը:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (համակարգային վերլուծության, պատմական, իրավահամեմատական և այլն) մեթոդները: Ատենախոսությունում հատկապես լայնորեն օգտագործվել է իրավահամեմատական մեթոդը, որի կիրառմամբ կոնկրետ հիմնախնդրի կապակցությամբ համեմատական վերլուծության են ենթարկվել ինչպես արտասահմանյան երկրների, այնպես էլ միջազգային դատարանների դատական պրակտիկայում, տարբեր հեղինակավոր միջազգային կառույցների փաստաթղթերում ձևավորված հիմնական մոտեցումները: Կիրառվել է նաև էմպիրիկ-վերլուծական մեթոդը, որի շրջանակներում պետական և տեղական ինքնակառավարման 36 մարմիններին հասցեագրված տեղեկատվության հարցումների միջոցով հավաքագրվել և համակարգվել են վարչական բողոքարկման պրակտիկային և վարչական դատարան ներկայացված հայցերի, դրանց շրջանակում կայացված մասնավոր որոշումների վերաբերյալ տվյալներ, որոնք ենթարկվել են քանակական և որակական վերլուծության:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում կատարված հետազոտությունների արդյունքներով պաշտպանության են առաջադրված որպես գիտական նորույթ ներկայացված մի շարք եզրակացություններ և տեսական դրույթներ.

1. Վարչարարության բողոքարկման սուբյեկտներին առաջադրվող «իրավական շահագրգռվածությունը» կարող է առկա լինել միայն այն դեպքում, երբ բողոքարկվող վարչարարությունն անձի իրավական վիճակի վրա ունեցել է իրական, կոնկրետ և նշանակալի միջամտող ազդեցություն, կամ առկա է այդպիսի միջամտող ազդեցության հավանականություն: Ընդ որում.

- վարչարարության ազդեցությունն *իրական* է, եթե այն միջամտում է կամ կարող է միջամտել անձի՝ օրենսդրությամբ պաշտպանվող որևէ «իրական (ռեալ)» իրավունքին,

- վարչարարության ազդեցությունը *կոնկրետ* է, եթե այն օբյեկտիվ իրականության մեջ միջամտում է տվյալ անձի իրավական կարգավիճակին, և իրավունքների խախտման հավանականությունը վերացական, ենթադրյալ ու անորոշ չէ,

- վարչարարության ազդեցությունը *նշանակալի* է, եթե այն առաջացրել է կամ կարող է առաջացնել իրավաբանորեն արժևորվող էական բացասական հետևանքներ բողոքարկող սուբյեկտի համար:

2. Հիմնավորվել է այն եզրահանգումը, ըստ որի՝ նպատակահարմար է բողոքարկող սուբյեկտին վերապահել իրավունք՝ բողոքարկելու նաև

բարենպաստ վարչական ակտը պատճառաբանական մասով, եթե դրանում առկա են տվյալ անձի իրավունքները խախտող կամ այդպիսի խախտման անմիջական հիմք առաջացնող դրույթներ: Բարենպաստ վարչական ակտը պատճառաբանական մասով բողոքարկող անձը, ըստ էության, պետք է կրի այն վիճարկելու առնչությամբ իր «իրավական շահագրգռվածության» ապացուցման բեռը, քանի որ այդ պարագայում գործում է բողոքարկման իրավունքի բացակայության կանխավարկածը:

3. Նկատի ունենալով, որ վարչարարության բողոքարկումը կարող է ուղղված լինել ոչ միայն մասնավոր, այլև հանրային շահի պաշտպանությանը, հանրային շահի պաշտպանությունը չի կարող նույնացվել միայն առանձին ոլորտում կամ սոցիալապես խոցելի առանձին խմբերի իրավունքների պաշտպանության առնչությամբ հարուցված հայցերի հետ: Նպատահարմար է ապահովել հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման կառուցակարգեր բոլոր այն դեպքերի համար, երբ.

- վարչարարությունն ուղղակիորեն առնչվում է հանրային կամ խմբային բարիքին (վարչարարության առարկայի չափանիշ),

- ողջամտորեն կարող է առնչվել կամ առնչվում է անձանց անորոշ կամ զգալի մեծ շրջանակի (վարչարարության հետևանքների չափանիշ),

- անձանց անորոշ կամ զգալի մեծ շրջանակի իրավունքներն ու օրինական շահերը շոշափվում են այն աստիճանի, որ վերջիններս ողջամտորեն ակնկալում են այդպիսի վարչարարության բողոքարկման հնարավորություն (ազդեցության նշանակալիության չափանիշ):

4. Առաջադրվել է հասարակական կազմակերպությունների կողմից հանրային շահի պաշտպանությամբ վարչարարության բողոքարկման հստակ չափանիշներ սահմանելու անհրաժեշտությունը: Այդպիսին է դիտարկվել «հանրային շահի պաշտպանությամբ վարչարարության բողոքարկման իրական շահագրգռվածությունը», ինչը ենթադրում է 2 հիմնական պայման: Առաջին՝ հասարակական կազմակերպությունը պետք է հիմնավորի, որ բողոքարկման նպատակը այնպիսի հանրային շահի առկայությունն է, որի պաշտպանությամբ արդարացի շահագրգռված է տվյալ հասարակական կազմակերպությունը: Երկրորդ պայմանը, որպես կանոն, վարչարարության անհատականացված, կոնկրետ հասցեատիրոջ և/կամ անհատական մակարդակում վարչարարության բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտի բացակայությունն է: Վարչարարության կոնկրետ հասցեատիրոջ առկայության դեպքում հասարակական կազմակերպություններին կարող է վերապահվել վարչարարության բողոքարկման իրավունք, եթե հասցեատիրոջ կողմից հայց ներկայացնելն օբյեկտիվորեն անհնար է, կամ հասցեատիրոջ համար բարենպաստ ազդեցություն ունեցող վարչարարությունը բողոքարկումը պայմանավորված է գերակայող հանրային շահով:

5. Վարչական դատավարությունում նպատակահարմար է ներդնել խմբային հայցի ինստիտուտը: Ընդգծվել է, որ բավարար չափով

հիմնավորված չէ այն դիրքորոշումը, ըստ որի՝ խմբային հայցն աղերսներ ունի վարչարարության բողոքարկման սուբյեկտներին առաջադրվող՝ «իրավական շահագրգռվածության» պահանջի մեղմացման, վարչարարության բողոքարկման սահմանների լայնացման կամ գործադիր իշխանության գործառութային ինքնուրույնությունը պահանջող ոլորտներում դատական միջամտության թույլատրելիության հետ: Յուրաքանչյուր հայցվոր պետք է բավարարի վարչարարության բողոքարկման իրավունք ունենալու համար անհրաժեշտ՝ իրավական շահագրգռվածության չափանիշին: Խմբային հայցի ինստիտուտն այս համատեքստում չի կարող մեկնաբանվել որպես նշված չափանիշներից ավելի ցածր աստիճանի շահագրգռվածություն ունեցող անձանց կողմից վարչարարության խմբային վիճարկման, վարչարարության նպատակահարմարության, վարչական մարմինների քաղաքական որոշումների տիրույթում գտնվող հարցերի վերանայման կամ գործադիր իշխանության իրացմանը դատարանի այլ անթույլատրելի միջամտության հնարավորություն:

6. Հանրային շահերի պաշտպանության լիարժեք ապահովման նպատակով առաջարկվում է վարչական դատավարությունում ներդնել «դատարանի ընկերոջ» ինստիտուտը, ինչը կարող է իրացվել միայն դատարանի նախաձեռնությամբ կամ թույլտվությամբ: Ընդ որում, որպես «amicus curiae» կարգավիճակով դիրքորոշումներ ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտներ հարկ է դիտարկել մասնավորապես՝ իրավաբան գիտնականներին, Մարդու իրավունքների պաշտպանին, ինչպես նաև հասարակական կազմակերպություններին՝ «հանրային շահի պաշտպանությամբ իրական շահագրգռվածության» առկայության դեպքում:

7. Առաջարկվում է վարչարարության վարչական կարգով բողոքարկման արդյունավետության գնահատման նոր մոդել, որն ուղղված կլինի վարչական բողոքարկման ինստիտուտը իրավական պաշտպանության արդյունավետ միջոց դարձնելուն: Առաջարկվող մոդելը հանգում է հետևյալ պայմանների առկայությանը.

- երաշխավորված է իրավական շահագրգռվածություն ունեցող անձանց բողոքարկման իրավունքը,
- վարչական բողոքը քննող մարմինը օժտված է գործառութային անհրաժեշտ ինքնուրույնությամբ,
- վարչական բողոքը քննող մարմինը կառուցվածքային և կազմակերպական առումով առանձնացված է բողոքարկվող վարչարարությունն իրականացրած մարմնից,
- վարչական բողոքը քննող մարմինը օժտված է հարցին վերջնական ու ամբողջական լուծում տալու լիազորությամբ,
- բողոքարկումն ապահովում է խախտված իրավունքների իրական և գործնականում արդյունավետ վերականգնումը,
- առկա են բողոքի քննության վարութային անհրաժեշտ երաշխիքներ,

- երաշխավորված է բողոքների արդարացի և ողջամիտ ժամկետում քննությունը:

Նշված չափանիշների միաժամանակյա առկայության դեպքում միայն կարող է լիարժեք ներդրվել վարչական բողոքարկման պարտադիրության հայեցակարգը: Հակառակ պարագայում վարչական բողոքարկման պարտադիրությունը ոչ միայն չի բարձրացնում վարչարարության արդյունքում խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, այլև վերածվում է դատարանի մատչելիության իրավունքի արհեստական խոչընդոտի:

8. Վարչարարության բողոքարկման արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից կարևոր նշանակություն կարող են ունենալ մեր կողմից առաջադրված՝ վարչական ակտի կատարման վրա բողոքարկման ազդեցությանն առնչվող հետևյալ դիրքորոշումները.

- «Վարչական ակտի կատարման կասեցում» եզրույթի պատշաճ իրավական մեկնաբանությունը ներառում է վարչական ակտի հասցեատիրոջ, վարչական ակտը կայացրած վարչական մարմնի և այլ իրավասու մարմինների ու անձանց կողմից տվյալ վարչական ակտի հիման վրա բոլոր գործողությունների կատարման ժամանակավոր դադարեցումը,

- վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտի իրավական ամրագրման պատշաճ կառուցակարգը հարկ է դիտարկել ոչ թե որպես վարչական ակտի բողոքարկման ինքնաբերաբար կիրառվող հետևանք, այլ դատարանի կողմից հայցի ապահովման ինստիտուտի շրջանակում կիրառման ենթակա՝ հայցվորի իրավունքի նախնական կամ միջանկյալ պաշտպանության միջոց: Այս կանոնից բացառություն պետք է լինի, և վարչական ակտի կատարումը բողոքարկման փաստի ուժով ինքնաբերաբար պետք է կասեցվի բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվող վարչական ակտի կատարումը ողջամտորեն կարող է հանգեցնել անձի կյանքի իրավունքի, խոշտանգումների արգելքի իրավունքի խախտման կամ օտարերկրացիների խմբային արտաքսման արգելքի խախտման: Ինքնաբերաբար կասեցում պետք է ապահովվի նաև հանրային իրավական դրամական պահանջներ սահմանող վարչական ակտերի դեպքում,

- վարչական դատավարությունում, հայցվորից զատ, վիճարկվող ակտի առնչությամբ իրավական շահագրգռվածություն ունեցող անձանց համար պետք է երաշխավորված լինի վարչական ակտի կատարումը կասեցնելու որոշման դեմ պաշտպանվելու հնարավորությունը՝ նախատեսելով որպես հայցի ապահովման միջոց կիրառված՝ վարչական ակտի կատարման կասեցումը գործին մասնակցող անձի միջնորդությամբ վերացնելու, վարչական ակտի կատարման կասեցմամբ պատճառված վնասի հատուցման և հակընդդեմ ապահովման կառուցակարգեր:

Ատենախոսության մեջ առկա են նաև մի շարք գիտագործնական բնույթի առաջարկություններ, այդ թվում՝ օրենսդրությունը բարելավելու տեսանկյունից, որոնք արտացոլված են ատենախոսության

համապատասխան հատվածներում և ատենախոսության Եզրակացություն հատվածում:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության գիտական նշանակությունը վարչարարության բողոքարկման համատեքստում մի շարք էական հարցադրումների վերաբերյալ գիտական նորույթ հանդիսացող եզրահանգումների առաջադրումն է, որոնք ուղղված են թե՛ գիտական և թե՛ գործնական հարթությունում առկա խնդիրների լուծմանը: Ատենախոսությունում ներկայացված եզրահանգումները հնարավորություն են տալիս հետագայում առավել առարկայական դարձնելու վարչարարության բողոքարկման ինստիտուտին առնչվող գիտական հետազոտությունները, օգտագործելու դրանք վարչական իրավունքի այլ ինստիտուտների վերաբերյալ առավել խորացված հետազոտություններ իրականացնելիս:

Ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծությունները կարող են հիմք հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության բարեփոխման համար, նպաստել ինչպես դատական պրակտիկայի, այնպես էլ վարչական մարմինների իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել նաև «Վարչական իրավունք», «Վարչական վարույթ և դատավարություն» և բոլոր այն դասընթացներում, որոնց հետազոտության առարկան առնչվում է վարչարարության բողոքարկման, բողոքարկման սուբյեկտների, վարչական դատավարությունում խմբային հայցերի, հանրային շահերի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման, «դատարանի ընկերոջ» ինստիտուտի, վարչական ակտի կատարման կասեցման և ատենախոսությունում քննարկման առարկա դարձված այլ հիմնահարցերին:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, ինչպես նաև համալսարանական և այլ գիտաժողովների շրջանակներում ներկայացրած զեկույցներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից (որոնք բաժանված են ընդհանուրն ութ պարագրաֆի), եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության ներածության մեջ հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, ներկայացրել մշակվածության աստիճանը, հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները, մեթոդաբանական հիմքը, նորմատիվ-իրավական և աղբյուրագիտական հիմքերը, գիտագործնական նշա-

նակությունը, արդյունքների հիմնավորվածությունն ու արժանահավատությունը, արդյունքների փորձարկումը, ձևակերպել է գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության 1-ին գլխի՝ *«Վարչարարության բողոքարկման ինստիտուտի ծագումը, զարգացման էվոլյուցիան և իրացման երաշխիքները»* վերտառությամբ 1-ին պարագրաֆում հեղինակն անդրադարձել է վարչարարության բողոքարկման ինստիտուտի ձևավորման և զարգացման համաշխարհային փորձը՝ սկսած պետական մարմինների գործողությունների բողոքարկման արձանագրված առաջին դրսևորումներից մինչ 19-րդ դարում Գերմանական ու Ֆրանսիական իրավական համակարգերում վարչարարության բողոքարկման մեխանիզմների ձևավորումը: Հեղինակն առանձնացրել է վարչարարության բողոքարկման ինստիտուտի զարգացման փուլերը, անդրադարձ կատարել Խորհրդային միությունում վարչարարության բողոքարկման էությանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում վարչարարության բողոքարկման ինստիտուտի՝ հետխորհրդային երկրներին բնորոշ զարգացման յուրահատուկ փուլերին: Արդյունքում ընդգծվել է, որ քսաներորդ դարի վերջերից սկսած վարչարարության բողոքարկման ինստիտուտը թևակոխել է իր զարգացման նոր՝ պայմանականորեն չորրորդ (եվրոպական և ամերիկյան համակարգերում՝ երրորդ) փուլ, երբ վարչարարության բողոքարկման ինստիտուտը, ունենալով կայուն իրավական հիմքեր՝ սահմանադրական իրավունքի ու սկզբունքի մակարդակում, այլևս դիտարկվում է որպես ժողովրդավարական հասարակության և իրավական պետության անբաժանելի բաղադրատարր, որի զարգացման ներկայիս փուլն առավելապես բնութագրվում է վարչարարության բողոքարկման իրավունքի՝ գործնականում իրական արդյունավետ իրացման երաշխավորման և ժամանակի մարտահրավերներին համահունչ իրավական ու գործնական գործիքակազմի ներդրման անհրաժեշտությամբ:

Ատենախոսության 1-ին գլխի՝ *«Վարչարարության բողոքարկման իրավունքի՝ որպես պատշաճ վարչարարության և դատական պաշտպանության հիմնարար իրավունքների բաղադրատարրի էությունը և իրացման շրջանակները»* վերտառությամբ 2-րդ պարագրաֆում հեղինակը քննարկման առարկա է դարձրել վարչարարության բողոքարկման իրավունքը՝ դրա էությունը, բաղադրատարրերը վերլուծության ենթարկելով պատշաճ վարչարարության և դատական պաշտպանության հիմնարար իրավունքների համատեքստում և այս համատեքստում վեր է հանել վարչարարության բողոքարկման իրավունքի բնորոշումը: Այնուհետև հեղինակը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Եվրոպական Միության Արդարադատության դատարանի դիրքորոշումների, միջազգային փորձի ուսումնասիրության, Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների համատեքստում վեր է հանել վարչարարության բողոքարկման օբյեկտների շրջանակի որոշման

չափանիշները՝ ընդգծելով, որ բողոքարկման իրավունքի առկայությունը չպետք է կապվի ներպետական համակարգում վարչարարություն հասկացության բնորոշման կամ վարչարարության դրսևորման ձևերի՝ օրենսդրորեն սահմանափակված շրջանակի հետ, և բողոքարկման օբյեկտների շրջանակը պետք է որոշվի վարչական մարմնի՝ արտաքին ներգործություն ունեցող գործունեության որևէ դրսևորման՝ անձի իրավունքների վրա ազդեցության և այդ ազդեցության՝ իրավաբանորեն արժևորվող նշանակալիության տեսանկյունից: Այնուհետև ատենախոսը քննարկման առարկա է դարձրել վարչարարության բողոքարկման իրավունքի իրացման շրջանակի հիմնահարցերը՝ գործադիր իշխանության իրացմանը դատարանի անթույլատրելի միջամտության բացառման, «ամբողջական յուրիսդիկցա» ունեցող տրիբունալի կողմից իր գործի քննության իրավունքի երաշխավորման, նորմատիվ վարչարարության դեպքում վարչարարության վերահսկողության «դրական» և «բացասական» սահմանների հիմնահարցերը՝ ընդգծելով, որ վարչարարության բողոքարկման ինստիտուտը չի կարող մեկնաբանվել որպես քաղաքական որոշում ու վարչահիրավական հայեցողություն ենթադրող հարցերում դատարանի կողմից գործադիր իշխանության ընտրած քաղաքականության հիմնավորվածության քննարկում:

Ատենախոսության 1-ին գլխի՝ *«Վարչարարության բողոքարկման սուբյեկտները»* վերտառությամբ 3-րդ պարագրաֆում հեղինակը քննարկել է բողոքարկման սուբյեկտների շրջանակի որոշման և բողոքարկման իրավունքի առկայությունը փաստելու հիմքում դրվող չափանիշները: Քննարկման առարկա դարձնելով վարչարարության բողոքարկման սուբյեկտների շրջանակի որոշման երկու հիմնական՝ իրավունքի և շահագրգռվածության վրա հիմնված հայեցակարգերը, այս առումով առկա միջազգային փորձը, Եվրոպական Միության Արդարադատության դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումները, բողոքարկման սուբյեկտների վերաբերյալ մոտեցումների զարգացման էվոլյուցիան՝ հեղինակն ընդգծել է, որ որ՛ թե իրավունքի, և թե՛ շահագրգռվածության վրա հիմնված՝ բողոքարկման սուբյեկտների շրջանակի որոշման մոդելները, մաքուր տեսքով և առանձին վերցրած, բավարար չեն՝ երաշխավորելու համար վարչարարության բողոքարկման առնչությամբ արդարացիորեն շահագրգռված բոլոր անձանց բողոքարկման իրավունքը: Արդյունքում առանձնացվել է վարչարարության բողոքարկման սուբյեկտների «իրավական շահագրգռվածության» որոշման եռաստիճան թեստ:

Ատենախոսության 2-րդ՝ *«Հանրային շահի պաշտպանությունը վարչարարության բողոքարկման համատեքստում»* գլխի՝ *«Հանրային շահի հասկացությունը և պաշտպանության մոդելները վարչարարության բողոքարկման համատեքստում»* վերտառությամբ 1-ին պարագրաֆում հեղի-նակը քննարկել է այն հարցը, թե ո՞ր դեպքերում, ի՞նչ չափանիշների

առկայության պայմաններում է «հանրային շահ» հասկացությունն արժևորվում վարչարարության բողոքարկման համատեքստում: Հիմք ընդունելով հանրային շահ հասկացության՝ միջազգային պրակտիկայում, ՄԻԵԴ-ի պրակտիկայում, Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներում տրված մեկնաբանությունները, հանրային շահի պաշտպանությամբ վարչարարության բողոքարկման ինստիտուտի զարգացման էվոլյուցիան և միջազգային փորձը, հեղինակը վեր է հանել հանրային շահերի պաշտպանությամբ վարչարարության բողոքարկման հիմնական մոդելները, դրանց ձևավորման հիմք հանդիսացող սկզբունքները: Պարագրաֆում հեղինակը մշակել է հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահի իրավաբանորեն արժևորման հիմքում դրվող չափանիշները և բացահայտելով դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ *«Խմբային հայցը և հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկումը»* վերտառությամբ 2-րդ պարագրաֆում հեղինակը բացահայտել է խմբային հայցի ինստիտուտի էությունը, վարչական դատավարությունում կիրառության միջազգային փորձը, խմբային հայցի առնչությամբ տեսական աղբյուրներում վերհանված հիմնական խնդիրները և մտահոգությունները: Պարագրաֆում միջազգային փորձի հիման վրա, ելնելով վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահի պաշտպանության համապարփակ գործիքակազմ նախատեսելու անհրաժեշտությունից՝ հեղինակը առաջարկել է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարությունում ներդնել խմբային հայցի ինստիտուտը՝ միաժամանակ առաջարկելով նաև այս ինստիտուտի առնչությամբ հնարավոր խնդիրների կանխարգելման ուղիները: Պարագրաֆում հաջորդիվ քննարկվել են հասարակական կազմակերպությունների կողմից վարչարարության բողոքարկման հիմնախնդիրները՝ ինստիտուտը համապարփակ վերլուծության ենթարկելով «actio popularis» հայցատեսակի հետ հնարավոր շփոթության, միջազգային փորձի, ՄԻԵԴ դիրքորոշումների համատեքստում, վեր հանելով ներկայումս Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված՝ հասարակական կազմակերպությունների կողմից վարչական դատարան դիմելու իրավակարգավորումների առնչությամբ առկա խնդիրները: Արդյունքում հեղինակն առաջարկել է հանրային շահերի պաշտպանության նպատակով հասարակական կազմակերպությունների՝ վարչական դատարան դիմելու իրավունքի առկայության որոշման նոր՝ «հանրային շահի պաշտպանությամբ իրական շահագրգռվածության» թեստը:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ *««Դատարանի ընկերոջ» և մասնավոր որոշման ինստիտուտները հանրային շահի պաշտպանության համատեքստում»* վերտառությամբ 3-րդ պարագրաֆում հեղինակը հետազոտել և վերլուծել է վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահերի պաշտպանության երաշխավորման տեսանկյունից

հիմնարար նշանակություն ունեցող՝ «դատարանի ընկերոջ» և մասնավոր որոշման ինստիտուտները: Քննարկման առարկա դարձնելով «դատարանի ընկերոջ» ինստիտուտի՝ վարչական դատավարությունում ներդրման օբյեկտիվ անհրաժեշտությունը և պատճառները, դրա առնչությամբ առկա միջազգային փորձը, արձանագրելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանում այս ինստիտուտի հաջող կիրառման փորձը, հեղինակը հիմնավորել է Հայաստանի Հանրապետությունում քննարկվող ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը: Միջազգային լավագույն փորձի հիման վրա հեղինակն առանձնացրել է այս ինստիտուտի առնչությամբ տեսական աղբյուրներում և իրավակիրառ պրակտիկայում արձանագրված խնդիրները՝ առաջարկելով ներդնել այս ինստիտուտի այնպիսի մոդել, որը հնարավորություն կտա ի սկզբանե բացառել այդպիսի խնդիրների առաջացումը: Կարևորելով վարչական դատարանին անհատական գործեր քննելուց ու կոնկրետ անձի խախտված իրավունքները վերականգնելուց զատ նաև մարդու իրավունքների համակարգային խախտումներին ու վարչարարության ոչ իրավաչափության համակարգային դրսևորումներին գործնականում արդյունավետ արձագանքելու հնարավորության ապահովման անհրաժեշտությունը՝ ատենախոսը քննարկման առարկա է դարձրել ներպետական վարչական դատավարությունում իր ամրագրումն ունեցող մասնավոր որոշման ինստիտուտը: Պարագրաֆում վերլուծության են ենթարկվել իրավունքի պաշտպանության կառուցակարգային միջոցները, ընդգծվել է դրանց ծանրակշիռ դերակատարումը ՄԻԵԴ պրակտիկայում՝ պիլոտային վճիռների համատեքստում, վեր են հանվել իրավունքների պաշտպանության կառուցակարգային միջոցների առնչությամբ գործնականում արձանագրվող հիմնական խնդիրները: Արդյունքում հեղինակը վեր է հանել այն ուղենիշները, որոնք պետք է դրվեն մասնավոր որոշման ինստիտուտի մեկնաբանության և կիրառման հիմքում:

Ատենախոսության 3-րդ՝ *«Վարչարարության բողոքարկման ինստիտուտի արդյունավետությունը»* գլխի 1-ին՝ *«Վարչարարության բողոքարկումը՝ որպես իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց»* վերտառությամբ 1-ին պարագրաֆում հեղինակը, քննարկման առարկա դարձնելով վարչարարության վարչական կարգով բողոքարկման ինստիտուտը՝ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի համատեքստում, առանձնացրել է այն չափանիշները, որոնց պետք է բավարարի վարչական կարգով բողոքարկման համակարգը՝ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց համարվելու տեսանկյունից: Այս համատեքստում պարագրաֆում քննարկման առարկա է դարձվել վարչական կարգով բողոքարկման պարտադիրության հարցը՝ այն վերլուծության ենթարկելով նաև Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի կիրառելի հանձնարարականների, ՄԻԵԴ չափանիշների, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի

սահմանափակման տեսանկյունից: Արդյունքում վեր է հանվել բողոքը քննող վարչական մարմիններին առաջադրվող «գործառութային ինքնուրույնության» չափանիշները, ինչպես նաև կոնկրետ գործով վարչական բողոքարկման արդյունավետության և վարչական բողոքարկման ընդհանուր արդյունավետության չափանիշները:

Ատենախոսության 3-րդ գլխի՝ *«Վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտը վարչարարության բողոքարկման իրավունքի արդյունավետության համատեքստում»* վերտառությամբ 2-րդ պարագրաֆում վարչարարության բողոքարկման արդյունավետության համատեքստում քննարկման առարկա են դարձվել վարչարարության բողոքարկման՝ վարչական ակտի կատարման վրա ունեցած ազդեցության հիմնահարցերը: Հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը, ՄԻԵԴ չափանիշները, վարչարարության բողոքարկման արդյունավետության տեսանկյունից կարևորագույն՝ բողոքարկման արդյունքում խախտված իրավունքների գործնականում արդյունավետ, իրական վերականգնումն ապահովելու հրամայականը, պարագրաֆում վեր է հանվել վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտի էությունը, դրա իրավական բնույթը, վարչարարության հասցեատիրոջ և շահագրգիռ այլ անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության և հավասարակշռության տեսանկյունից քննարկվող ինստիտուտի իրավական ամրագրման պատշաճ գործիքակազմը: Արդյունքում հիմնավորվել է վարչական ակտի կատարման կասեցումը հայցի ապահովման ինստիտուտի շրջանակում ամրագրման ենթակա լինելու գաղափարը՝ վեր հանելով այդ ընդհանուր կանոնից սահմանման ենթակա բացառությունները, ինչպես նաև վարչական ակտի կատարման կասեցման համատեքստում շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ, վարչական դատավարությունում ներդրման ենթակա գործիքակազմերը:

Ատենախոսության **եզրակացությունում,** ի լրումն պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթների, կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումները:

1. Վարչարարության բողոքարկման իրավունքը գործնականում երաշխավորված և արդյունավետ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ վարչական դատարանը բավարարում է «ամբողջական իրավազորության» դատարանի պահանջներին, այն է՝ ունի ամբողջական, օրենսդրորեն երաշխավորված և գործնականում արդյունավետ գործիքակազմ՝ քննարկման առարկա դարձնելու այն հարցը, թե արդյո՞ք համապատասխան վարչական մարմինը գործել է իր լիազորությունների շրջանակում, օժտված է վարչարարության օրինականության ստուգման ամբողջական լիազորությամբ, մասնավորապես՝ բողոքի (հայցի) բոլոր փաստական հիմքերի հիմնավորվածությունն ստուգելու, բողոքարկվող վարչարարության իրավաչափությունը գնահատելու, վարչարարության հիմք հանդիսացող՝ առանձին վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց ակտերի կամ

գործողությունների իրավաչափությունն ստուգելու, հայեցողական լիազորությունների իրացման հիմքով իրականացված վարչարարության իրավաչափության վերաբերյալ գործեր քննելիս՝ ընտրված հայեցողական լիազորության իրավաչափության և իրացված լիազորության՝ կոնկրետ գործի փաստական հանգամանքներին համապատասխանության հարցը ստուգելու հնարավորությամբ:

2. Վարչարարության բողոքարկման իրավունքը բողոքարկվող վարչարարության առնչությամբ «իրավական շահագրգռվածություն» ունեցող անձի իրավունքն է՝ իրավասու վարչական մարմնից կամ վարչական դատարանից պահանջելու վարչարարության իրավաչափության ստուգում, իր բողոքի՝ ողջամիտ ժամկետում, արդարացի, անաչառ, դատական կարգով բողոքարկման դեպքում՝ նաև հրապարակային, քննություն, և բողոքի քննարկման արդյունքում անձի խախտված իրավունքների ամբողջական և գործնականում արդյունավետ վերականգնում, ինչպես նաև հանրային շահի պաշտպանությամբ իրական շահագրգռվածություն ունեցող սուբյեկտի իրավունքը՝ պահանջելու վարչարարության իրավաչափության ստուգում՝ վարչարարության առարկայի, հետևանքների և ազդեցության նշանակալիությունից ելնելով իրավաբանորեն արժևորվող հանրային շահի պաշտպանության նպատակով:

3. Վարչարարության բողոքարկման ինստիտուտը չի կարող մեկնաբանվել որպես քաղաքական որոշում ու վարչաիրավական հայեցողություն ենթադրող հարցերում դատարանի կողմից գործադիր իշխանության ընտրած քաղաքականության հիմնավորվածության քննարկում, այն է՝ այնպիսի հարցերի քննարկում, որոնք ի սկզբանե գործադիր իշխանության իրավասության տիրույթում են:

4. Վարչարարության բողոքարկման իրավունքի առկայության հիմքը ոչ թե անձի՝ վարչական վարույթում ունեցած կարգավիճակն է, այլ ատենախոսությունում քննարկված իմաստով «իրավական շահագրգռվածության» առկայությունը, այն է՝ կայացված վարչական ակտով անձի իրավունքների կամ օրինական շահերի խախտումը կամ խախտման իրական վտանգը:

5. Վարչարարության բողոքարկման համատեքստում խմբային հայցի ինստիտուտը պետք է ունենա իր իրավական ամրագրումն ու ճանաչումը՝ որպես վարչարարության իրավաչափության համակարգային վերանայման, վարչարարության արդյունքում անձանց իրավունքների համակարգային խախտումների հակակշռմանն ուղղված գործիքակազմ, որի նպատակը վարչարարության ոչ իրավաչափության այնպիսի դրսևորումների շտկումն է, որոնք համակարգային, կրկնվող բնույթ ունեն կամ խոսում են ոչ թե առանձին դեպքում վարչարարության ոչ իրավաչափ դրսևորման, այլ տվյալ ոլորտում իրականացվող մեծածավալ ոչ իրավաչափ քաղաքականության մասին:

6. Բավարար չափով հիմնավորված չէ այն դիրքորոշումը, ըստ որի՝ խմբային հայցն աղերսներ ունի վարչարարության բողոքարկման

սուբյեկտներին առաջադրվող՝ «իրավական շահագրգռվածության» պահանջի մեղմացման, վարչարարության բողոքարկման սահմանների լայնացման կամ գործադիր իշխանության գործառութային ինքնուրույնությունը պահանջող ոլորտներում դատական միջամտության թույլատրելիության հետ: Յուրաքանչյուր հայցվոր պետք է բավարարի վարչարարության բողոքարկման իրավունք ունենալու համար անհրաժեշտ՝ իրավական շահագրգռվածության չափանիշին: Խմբային հայցի ինստիտուտն այս համատեքստում չի կարող մեկնաբանվել որպես նշված չափանիշներից ավելի ցածր աստիճանի շահագրգռվածություն ունեցող անձանց կողմից վարչարարության խմբային վիճարկման, վարչարարության նպատակահարմարության, վարչական մարմինների քաղաքական որոշումների տիրույթում գտնվող հարցերի վերանայման կամ գործադիր իշխանության իրացմանը դատարանի այլ անթույլատրելի միջամտության հնարավորություն:

7. Վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահի պաշտպանությունը չի կարող ամբողջությամբ իրագործվել միայն սուբյեկտների որոշակի սահմանափակ շրջանակի վարչարարության բողոքարկման իրավունք վերապահելով: Հանրային շահերի պաշտպանության լիարժեք ապահովումը վարչական դատավարությունում հնարավոր է այլ գործիքակազմերի հետ համատեղ վարչական «դատարանի ընկերոջ» ինստիտուտի ներդրման միջոցով, ինչը հնարավորություն կտա առանձին սուբյեկտներին առանց դատավարությունում կողմի կարգավիճակ ունենալու դատարանին ներկայացնել իրենց դիրքորոշումը՝ վարչական մարմնի կողմից տվյալ գործի համանման փաստական հանգամանքներում անձանց իրավունքների համակարգային և էական խախտումների և գործի քննության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող, սակայն դատավարության մասնակիցների կողմից չներկայացված հարցերի վերաբերյալ:

8. Հաշվի առնելով «դատարանի ընկերոջ» ինստիտուտի վերաբերյալ ձևավորված պատշաճ իրավական ավանդույթների բացակայությունը, նպատակահարմար և անհրաժեշտ է համարվում այդ ինստիտուտի՝ վարչական դատավարությունում փուլային ներդրումը՝ այն սկզբնական շրջանում ներդնելով միայն Վճռաբեկ դատարանում, իսկ հետագայում դրա գործողությունն աստիճանաբար, ինստիտուտի՝ գործնականում արդյունավետության հարցում հավաստիանալուց հետո, դրա գործողությունը տարածելով նաև Վարչական դատարանում գործի քննության փուլի վրա:

9. Վարչական դատավարությունում մասնավոր որոշման ինստիտուտը, ի սկզբանե միտված լինելով մարդու իրավունքների համակարգային, էական խախտումների, վարչական մարմինների կողմից համակարգային բնույթ կրող ոչ իրավաչափ վարչարարության բարձրաձայնմանն ու արձանագրմանը Վարչական դատարանի կողմից, պետք է ընկալվի և մեկնաբանվի որպես վարչարարության համատեքստում համակարգային խախտումների բարձրաձայնման կարևորագույն գործիք՝ ապահովելով կոնկրետ գործով

դատարան դիմած անձի խախտված իրավունքների վերականգնումից զատ պատշաճ վարչարարության իրավունքի և հանրային շահի պաշտպանության երաշխավորումը և վարչական մարմինների համակարգային ոչ իրավաչափ գործունեության վրա իրական ազդեցությունը:

10. Իրավական արդյունավետ պաշտպանության միջոցի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը, որպես իրավունքի գերակայության հիման վրա խարսխված կարևորագույն իրավունք և սկզբունք, կիրառելի է նաև վարչարարության վարչական կարգով բողոքարկման համակարգի նկատմամբ, և վարչական կարգով բողոքը քննող մարմինների՝ ոչ դատական կարգավիճակը, ինչպես նաև վերջիններիս՝ վարչական մարմինների ընդհանուր համակարգում ինստիտուցիոնալ կարգավիճակը, ինքնին չեն բացառում վարչական կարգով բողոքարկման՝ արդյունավետ պաշտպանության միջոց համարվելը:

11. Իրավական արդյունավետ պաշտպանության միջոցի ապահովման տեսանկյունից վարչական բողոքը քննող մարմնի «անկախությունը» պետք է մեկնաբանվի ոչ թե ձևական, այլ գործառութային համատեքստում, և բողոքը քննող մարմինն անկախության այդ աստիճանին բավարարում է ոչ թե վերջինիս՝ գործադիր իշխանության համակարգում ներառված լինելուց ելնելով, այլ վերջինիս՝ գործառութային անհրաժեշտ ինքնուրույնությունից, վարչարարությունն իրականացրած մարմնից առանձնացվածությունից, լիազորությունների շրջանակից և բողոքի քննության գործնական չափանիշներից ելնելով:

12. Վարչական բողոքարկումը որպես վարչական դատարան դիմելու պարտադիր նախապայման նախատեսելը վարչական բողոքարկման՝ պատշաճ գործող և իրավական պաշտպանության արդյունավետ միջոց համարվող համակարգի բացակայության պայմաններում ուղղակիորեն կարող է հանգեցնել Կոնվենցիայի 6-րդ ու 13-րդ հոդվածների խախտման՝ ողջամտորեն հանգեցնելով դատարանի մատչելիության իրավունքի և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի հասանելիության խախտմանը: Վարչական կարգով բողոքարկման պարտադիրությունը՝ թե՛ ամբողջությամբ, թե՛ առանձին տեսակի վարչական ակտերի մասով, քննարկման առարկա կարող է դարձվել և իրավաչափ համարվել միայն այնպիսի իրավական համակարգում, որտեղ վարչական բողոքարկումը բավարարում է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի՝ վերը նշված բոլոր չափանիշներին: Նման չափանիշների բացակայության դեպքում վարչական բողոքարկման պարտադիրությունը ոչ միայն չի բարձրացնում վարչարարության արդյունքում խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, այլև վերածվում է հիմնարար իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման:

13. Վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտը, որպես իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց ունենալու իրավունքի բաղադրատարր, կարող է իր նպատակին ծառայել միայն այն դեպքում, եթե հնարավորություն տա ապահովել մինչ վեճի վերջնական լուծումը դատարան

դիմելու պահին առկա փաստացի և իրավական դրության պահպանումը, ուստի «վարչական ակտի կատարման կասեցում» եզրույթի պատշաճ իրավական մեկնաբանությունը ներառում է վարչական ակտի հասցեատիրոջ, վարչական ակտը կայացրած վարչական մարմնի և այլ իրավասու մարմինների ու անձանց կողմից տվյալ վարչական ակտի հիման վրա բոլոր գործողությունների կատարման ժամանակավոր դադարը:

14. Վիճարկվող վարչական ակտի կատարման ինքնաբերաբար, զուտ հայց կամ բողոք ներկայացնելու փաստի ուժով հիման վրա կասեցումը, թեև ներկայումս որպես ընդհանուր կանոն ամրագրված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այնուամենայնիվ, ո՛չ դատական պաշտպանության, ո՛չ վարչարարության բողոքարկման ինստիտուտի՝ որպես իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի տեսանկյունից պարտադիր պահանջ չէ, և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում ևս, որպես ընդհանուր կանոն, պարտադիր չէ բողոքարկվող վարչական ակտի կատարման ինքնաբերաբար կասեցումը:

15. Վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտի իրավական ամրագրման պատշաճ կառուցակարգը հարկ է դիտարկել ոչ թե որպես վարչական ակտի բողոքարկման ինքնաբերաբար կիրառվող հետևանք, այլ դատարանի կողմից հայցի ապահովման ինստիտուտի շրջանակում կիրառման ենթակա՝ հայցվորի իրավունքի նախնական կամ միջանկյալ պաշտպանության միջոց: Ընդ որում, շահագրգիռ անձի համար պետք է երաշխավորվի նաև մինչ հայց կամ բողոք ներկայացնելը վարչական ակտի կատարման կասեցում պահանջելու իրավունքը:

16. Նախորդ կանոնից բացառություն պետք է լինի և վարչական ակտի կատարումը բողոքարկման փաստի ուժով ինքնաբերաբար պետք է կասեցվի բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվող վարչական ակտի կատարումը ողջամտորեն կարող է հանգեցնել անձի կյանքի իրավունքի, խոշտանգումների արգելքի իրավունքի խախտման կամ օտարերկրացիների խմբային արտաքսման արգելքի խախտման, որոնց շրջանակում գործող օրենսդրության համաձայն ներառվում են ապաստանի հայցի կամ փախստականի ճանաչման առնչությամբ հարուցված ապաստանի ընթացակարգի, ինչպես նաև «Փախստականների մասին» օրենքով նախատեսված վարչական այլ ընթացակարգերի հետևանքով լիազոր մարմնի կայացրած ցանկացած բացասական որոշումները և օտարերկրացիների արտաքսման վերաբերյալ որոշումները:

17. Վարչական ակտի կատարումը միայն դատարանի որոշմամբ կասեցվելու կանոնից օբյեկտիվորեն բացառություն պետք է հանդիսանան հանրային իրավական դրամական պահանջները՝ սահմանելով հանրային իրավական դրամական պահանջներ սահմանող վարչական ակտերի վարչական և դատական կարգով վիճարկման դեպքում դրանց գործողության ինքնաբերաբար կասեցում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Գեղամյան Է. Կ., Վարչարարության բողոքարկման սուբյեկտները // Պետություն և իրավունք N 3 (94) 2022, էջեր 30-39:

2. Գեղամյան Է. Կ., The Essence of the Institute of Suspension of Execution of an Administrative Act // Պետություն և իրավունք № 1 (95) 2023, 2024, էջեր 19-25:

3. Գեղամյան Է. Կ., Վարչարարության բողոքարկումը որպես իրավական պաշտպանության արդյունավետ միջոց // Գիտական Արցախ, № 3 (26), 2025, էջեր 83-94:

4. Գեղամյան Է. Կ., Մարդու իրավունքների պաշտպանի դերը վարչարարության բողոքարկման համատեքստում // Հանրային կառավարում, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2024, էջեր 290-301:

5. Գեղամյան Է. Կ., «Դատարանի ընկերոջ» ինստիտուտը՝ վարչական դատավարությունում հանրային շահի պաշտպանության համատեքստում // Արդարադատություն, 2026 ապրիլ № 2 (63), էջեր 24-33:

6. Գեղամյան Է. Կ., Վարչարարության բողոքարկման օբյեկտները, բողոքարկման իրավունքի իրացման և վարչարարության իրավաչափության ստուգման սահմանները // «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, № 26, մարտ 2026, էջեր 34-53:

7. Գեղամյան Է. Կ., Խմբային հայցի և հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման հիմնախնդիրները վարչական դատավարությունում // «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, № 26, մարտ 2026, էջեր 54-68:

RESUME

ELINA GEGHAMYAN

THE INSTITUTE OF APPEAL IN ADMINISTRATIVE PROCEDURE AND ADMINISTRATIVE PROCEEDINGS

This dissertation conducts a comprehensive legal study of the institute of appeal against administrative action as a fundamental guarantee of the rule of law, proper administration, judicial protection, and the effective restoration of violated rights in a democratic society. The research examines the essence, historical evolution, subjects, objects, limits, and guarantees of administrative appeal, along with the mechanisms ensuring the balance between public and private interests within administrative justice.

The topic is timely for several converging reasons: the growing significance of effective administrative remedies in contemporary legal systems; the imperative to ensure the accessibility and practical effectiveness of appeal mechanisms; and the emergence of new challenges surrounding the protection of public interest, collective rights, and the broader transformation of public administration. Although the right to appeal against administrative action is constitutionally entrenched in the Republic of Armenia and closely tied to the fundamental rights of proper administration and judicial protection, it has not previously been subjected to comprehensive scholarly analysis in Armenian legal doctrine.

The dissertation's purpose is to examine the institute of administrative appeal through both theoretical and practical perspectives, and to formulate theoretically grounded conclusions and proposals for improving legal regulation, judicial practice, and the effective implementation of rights-protection mechanisms.

The research addresses: the legal nature and historical evolution of administrative appeal; the determination of its subjects and objects; the concept of legal interest; protection of public interest in administrative proceedings; class actions; the amicus curiae institution; the effectiveness of administrative appeals; and the suspension of administrative acts as a guarantee of effective judicial protection.

The study employs both general scientific and specialized legal methods - including analysis, synthesis, induction, deduction, and comparative-legal, historical, systemic, and empirical-analytical approaches. Its normative basis comprises the Constitution of the Republic of Armenia, international treaties, the case law of the European Court of Human Rights, the Court of Justice of the European Union, and the Constitutional Court and Court of Cassation of the

Republic of Armenia, supplemented by relevant international instruments and comparative legal materials.

The dissertation's scientific novelty lies in the author's original contributions concerning: the criteria of legal interest in appeals against administrative action; the admissibility of challenging favorable administrative acts in defined circumstances; mechanisms for public interest litigation; the introduction of class actions and the amicus curiae institution into Armenian administrative proceedings; a new model for evaluating the effectiveness of administrative appeals; and a reconceptualization of the legal nature of the suspension of administrative acts within the framework of interim judicial protection.

The research findings are of both theoretical and practical significance: they may inform further scholarly inquiry, legislative reform, judicial and administrative practice, and the teaching of administrative law and administrative procedure. The dissertation was prepared at the Faculty of Law of Yerevan State University, and its results have been published in peer-reviewed articles and presented at scientific conferences and professional forums.

ГЕГАМЯН ЭЛИНА КАРЕНОВНА

ИНСТИТУТ ОСПАРИВАНИЯ В АДМИНИСТРАТИВНОМ ПРОИЗВОДСТВЕ И АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

РЕЗЮМЕ

Диссертация посвящена комплексному правовому исследованию института оспаривания административной деятельности как фундаментальной гарантии верховенства права, надлежащего управления, судебной защиты и эффективного восстановления нарушенных прав в демократическом обществе. В работе рассматриваются сущность, историческая эволюция, субъекты, объекты, пределы и гарантии административного обжалования, а также механизмы обеспечения баланса публичных и частных интересов в административном судопроизводстве.

Актуальность темы определяется рядом взаимосвязанных факторов: возрастающей ролью эффективных средств административной защиты в современных правовых системах; необходимостью обеспечить доступность и действенность механизмов обжалования; появлением новых вызовов в сфере защиты публичного интереса и коллективных прав; а также масштабной трансформацией публичного управления. Несмотря на конституционное закрепление права на обжалование административной деятельности в Республике Армения и его неразрывную связь с основными правами на надлежащее управление и судебную защиту, данный институт до настоящего времени не получил системного научного осмысления в отечественной правовой доктрине.

Цель исследования - всестороннее научно-практическое изучение института административного обжалования и формулирование теоретически обоснованных выводов и предложений, направленных на совершенствование правового регулирования, судебной практики и реальной действенности механизмов защиты нарушенных прав.

В диссертации исследуются: правовая природа и историческая эволюция административного обжалования; критерии определения его субъектов и объектов; понятие правовой заинтересованности; защита публичного интереса в административном судопроизводстве; институт группового иска; институт *amicus curiae*; эффективность административного обжалования; приостановление действия административных актов как гарантия надлежащей судебной защиты.

Методологическую основу исследования составляют как общенаучные (анализ, синтез, индукция, дедукция), так и специальные методы: сравнительно-правовой, исторический, системный и эмпирико-

аналитический. Нормативная база включает Конституцию Республики Армения, международные договоры, практику Европейского суда по правам человека, Суда Европейского союза, Конституционного суда и Кассационного суда Республики Армения, а также соответствующие международно-правовые акты и материалы сравнительного правоведения.

Научная новизна диссертации определяется авторскими разработками в следующих направлениях: критерии правовой заинтересованности при административном обжаловании; допустимость оспаривания благоприятных административных актов в отдельных случаях; механизмы защиты публичного интереса; введение институтов группового иска и *amicus curiae* в административное судопроизводство Республики Армения; новая модель оценки эффективности административного обжалования; переосмысление правовой природы приостановления действия административных актов в контексте мер предварительной судебной защиты.

Теоретическая и практическая значимость работы состоит в возможности использования её выводов и предложений в дальнейших научных исследованиях, законодательной деятельности, судебной и административной правоприменительной практике, а также в преподавании административного права и административного судопроизводства. Диссертация выполнена на юридическом факультете Ереванского государственного университета; её результаты отражены в научных публикациях автора и представлены на научных конференциях и профессиональных дискуссиях.